

Հ. ԱՐԲԱՆՈՒՅԱՆ

ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

18-րդ դարի ռաթսաւական թվականներին էջմիածնում կառուցվում է տպարան և թղթի գործարան:

Դեռևս 1771 թ. ախարստում և գործի է դրվում տպարանը՝ կոչված լինելով բախարսիու և կեղեցական գրականության կաթիլը, որ գլուխ էր հայ հոգևորականությունը՝ կաթողիկոսական և բողոքականութեան դեմ մղած իր դավանաբանական պայքարում:

1. ԹՂԹԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՆՀՐԱԺՆՏՈՒԹՅՈՒՆԸ

Տպարանի աշխատելուց կարճ ժամանակ անցած, պարզվում է որ նա կանգնած է աշխատանքը դադարեցնելու վտանգի առաջ, թղթի բացակայության պատճառով: Այդ շրջանում թե տպագրության և թե գրելու համար թուղթը ստացվում էր Եվրոպայից՝ Տաճկաստանի վրայով: Հաղորդակցության ճանապարհների անկանոնության, անապահովության և հաղորդակցության միջոցների հետամնացության պայմաններում՝ թղթի հայթայթումը կապված էր մեծ գծավարությունների հետ:

Թղթի՝ Եվրոպայից ստացվելու մասին մենք ունենք որոշակի վկայություններ: Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հիշատակարանում, ուր քարտուղարի կողմից գրանցված են նրա նամակների համառոտ բովանդակությունները, մենք կարդում ենք.

ա) «Եւ զթուղթ Զաբարիա վարդապետին¹⁾ յղեաց առ սա²⁾ յիւր Պօլիս: Եւ պատուէր՝ զի ԲՃ (200) օգմայ թուղթ, կամ որքան և գտցէ առեալ յղեացէ: Նաև գրեացէ Եղորն իւրոյ՝ Խօջա Նաղարէթին, զի նա ևս ԲՃ (200) կամ ԳՃ (300) օգմայ թուղթ առեալ յղեացէ վասն տպագրատան» (1774 թ. մարտի 22-ի նամակից. «Դիվան Հայոց պատմ.» գիրք Ը, էջ 297):

բ) Զմյուռնիայի նախկին և առաջնորդ Ղուկաս վարդապետը «յառաջագոյն խոստացեալ սրբազան վեհին, թե ի Ֆռանկաց թուղթ եմ բերելոց. որոյ աղապաւ և սրբազան վեհն գրեաց նմա, զի գալն իւր և թէ թուղթն և կեալ իցէ ի Ֆռանկաստանու, բերցէ ընդ իւր. իսկ թէ չիցէ և կեալ, առացէ Աստուածատուր աղային, որ նա հետոյ յղեացէ» (1775 թ. հունիսի 3-ի նամակից. «Դիվ. Հայոց պատմ.» գիրք Ը, էջ 428):

Կան և բազմաթիվ այլ վկայություններ, որոնցով հաստատվում է ոչ միայն թղթի Եվրոպայից ստացվելը, այլ և նրա մեծ կաթիլը, թղթի գործարանի կառուցման անհրաժեշտությունը: Իր 1775 թ. փետրվարի 13-ի նամակում՝ ուղղված Մարտիկեանց մահաեօի Փիլիպպոսին, Սիմեոն Երևանցին գրում է. «զի վասն թղթոց կարի պակասութիւն ունէաք, զոր ըստ բաւականին առ ձեռն բերել ոչ կարէաք. և մանաւանդ՝

1) Պոլսի Հայոց պատրիարք:

2) Կարենցի Փիլիպպոս Մարտիկեանց, որն այդ ժամանակ գտնվում էր Արարիկում:

առեցեալն ևս, ըստ մեծի մասին անօգուտ և անտպալաշիւ լինէր» (Նույն տեղ, էջ 332):

2. ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԵՐԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Ելնելով թղթի ձեռք բերման վերահիշյալ դժվարություններից՝ Սիմեոնը՝ ձեռնարկում է թղթի գործարան հիմնելու աշխատանքներին: Դեռևս 1772 թվին, Պոլսում գտնվող Մադրասեցի Չաքիկենց Գրիգորից խնդրում է՝ թղթաշեն վարպետներ ուղարկել Էջմիածին: Երկու տարի անցնելուց հետո վարպետներ ձեռք բերելու հույսը կըտրած, Հնդկաստանի հայոց նվիրակ Փիլիպպոս վարդապետին խնդրում է՝ թարգմանել տալ և իրեն ուղարկել «թղթաշենության խրատը», որով դուցէ, կարելի լինի տեղում գործարան հիմնել, առանց օտարների օգնության, ահա նույն հիշատակարանից մի կտոր բայլ և յանցեալ ամին թղթաշենութեան խրատն թարգմանեցուցեալ էր նա և յղեալ առ սրբազան վեհն, յորմէ ոչինչ իմացեալ եղև, զի թարգմանութիւնն և գրեալն կարի խառնափնդոր էին, վասն որոյ պատուիրեալ նմա զի տէր Աւետիսն վերահացու կարգեալ ի վերա թարգմանութեանն, թղթաշենության խրատն հայերէն բառիւ և պարզ ոճիւ վերստին լաւ թարգմանի թարգմանել տացէ և առ ինք յղեսցէ, և եթէ այսու ևս ոչ լինիցի նաւր, ախուհեաւ գալ իմն հնարս հոգացցէ, զի թերևս թղթաշենութեան կերպն ի ձեռն բերցուք» (Նույն տեղ էջ 308):

Երեք տարվա նամակագրություններից ու բանակցություններից հետո՝ վերջապես հաջողվում է նույն Չաքիկյանի միջոցով Փարիզից հրավիրել Ֆրանսիացի թղթաշեն երկու վարպետներ՝ (Մուսիօ Բեյսօն և Մուսիօ Դեսիօն), որոնք՝ Պոլսում պայմանագիր կնքելով նույն Չաքիկյանի հետ, մեկնում են Էջմիածին և, տեղ հասնելով, 1775 թ. մարտից սկսում են գործարանի կառուցումը:

Չաքիկյանին, Պոլսի պատրիարքին և այլոց Սիմեոն կաթողիկոսի կողմից ուղարկված նամակներից պարզվում է, որ ֆրանկ վարպետները և նամանավանդ նրանց

թարգման Ստեփանն ամեն կերպ աշխատում են ձգձգել գործը, դրամ կորզել և թղթաշենության արհեստը Էջմիածնականներից գաղտնի պահել: Պոլսի պատրիարք Չաքարիա վարդապետին դրած նամակում Սիմեոն Երևանցին հայտնում է. «Եւ թարջիմանն (թարգման) Ստեփանն... ամենևին ոչ պիտոյանար մեզ զի միշտ արբեցության և որկրամոլորության հետեւէր: Եւ մանավանդ աղթարմա գոլով՝ ոչ կամէր, զի թղթաշենության արհեստն ի ս. Աթոռջս հաստատեսցի, քանզի՝ ի մէջ խոտակցութեան գրանս թղթաշենացն խայինութեամբ թիւր մեկնէր մեզ, զոր նշանօք իմանայաք մեք» (Դիվ. Հայոց. պատմ. գիրք Լ. էջ 364): Ենչ վերաբերում է վարպետներին, նրանք այլ և այլ պատրվակներ են հնարում, ինչպես թղթի վատորակ լինելու, այնպես էլ իրենց կողմից աշակերտներ պատրաստելու պարտավորությունը չկատարելու հոմարբայց թերացման հիմնական պատճառն այն էր, որ նրանք թղթաշենության արհեստը տարածելու իրավունք չեն ունեցել և այդ գործին ձեռնարկել են գաղտնի կերպով: Նույն Չաքարիա վարդապետին ուղղված՝ Սիմեոնի նամակում, որը վերաբերում է վարպետներից փոքրի՝ Մուսիօ Դեսիօնի ֆրանսիա վերադարձնելուն, կարդում ենք. «Նա և պատուէր, զի օր մի յառաջ հանցէ դնայ անտի (Պոլսից), որ շատ չմնացէ անդ և ի Ֆռանկսդի նաւ մի դիցե, ալլ ուրիշ ազգի նաւով յղեսցէ, իսկ եթէ որիշ ազգի նաւ ի պատրաստի չգտանիցի ի Զմիւռին յղեսցէ անտի շուտով, զի նա անդ յալլ նաւ մտեալ երթիցէ յորիշ երկիր՝ և անտի իւր քաղաքն, որպես և իւր աղերսանքն էր. քանզի ասէին թէ՝ զմեզ ուղարկողքն թղթաշենութեան անուամբ չյղեսցին, ալլ որիշ պատճառաւ՝ և ալլ անուամբ, ի ծածուկ պահելով թղթաշենութեան անունն առ երկիւղիւ Արդ թէ իմացեն ասէ՝ թէ ևս այսու անուամբ եմ եկեալ աստ, զչարիս հասուցանեն ինձ և մեր ուղարկողացն» (Նույն տեղ, էջ 529):

1776 թ. հունվարի 4-ին արտադրվում է առաջին թուղթը, սակայն, վատորակ վարպետների սիմուլացիան պատճելու համար՝ Սիմեոնը սպառնում է գործի զցել

Ֆախախտան և նույնիսկ «ճվեցաք, ասէ, զկղակս նոցին»։ Վարպետները խոստանում են նոր մազ շինել՝ որից հետո լավ թուղթ կարտադրեն. և «սկսան նոր մազ կաղմել զի այնու զլան հանցին. հանցին և այնու, այն ևս համանցաւ Թոանկատանու թղթոյն»։ (Նույն տեղ, էջ 582)։

Ֆրանսիացի վարպետների էջմիածնում մնալու անօգտավետութիւնը վերջնականապէս իմացվելուց հետո, նրանք վճռովում են այնտեղից, ստանալով իրենց հասանելիք երեք տարվա աշխատավարձը։

Նախքան վերահիշյալ վարպետները էջմիածին կհասնեն Սիմեոն կաթողիկոսը վարպետներ էր խնդրել նաև Պարսկաստանից։ 1775 թ. հունիսի 28-ին ժամանել էին նաև Պարսկաստանից պահանջված պարսիկ վարպետները, որոնք եռանդով ու բարեխղճօրէն կատարելով իրենց աշխատանքը, կարճ ժամանակամիջոցում ոչ միայն կառուցել էին մի նոր դործարան, այլ և պատրաստել էին աշակերտներ (Նիկողայոս և Մարգար) և արտադրել լավօրակ թուղթ։

Սխալվում է Դյուլտ քահանայ Աղանջանը, երբ գրում է, թէ «Սիմեոնը բերել տվեց այնտեղից (Պարսկաստանից) վարպետներ, բայց նոքա չկարողացան թուղթ շինել» (Դիվան Հայոց պատմ. գիրք գ. էջ 249)։ Հենց նույն Սիմեոն կաթողիկոսը, Չաքիկյանցին ուղղված 1776 թ. դեկտեմբերի¹⁾ 6-ի նամակում՝ զանդատվելով թղթաշին ֆռանկ վարպետներից՝ գրել է. «Վերջապես այն էր չար միտքն սոցա (ֆռանկ վարպետների)։ զի այս արհեստս աստ մի յառաջացի. այլ քան զիւրեանց զխտեցեալն լաւ հաստատելոց է աստուծով, որպէս տիպն. լիւր միամիտ... մինչև դոքա ետացան ի պախ աստ, մեք կարծեաք թէ՛ այլ ոչ դան, ուստի ի Քեարիմ խանէն զթղթաշինս խնդրեցաք։ Յետոյ հանկարծ եկին Թոանկքն, և նոքա ևս եկին, ուստի՝ այլ չկարողացաք ջուղապ առնել, այլ նոցա ևս շինել ետուք զգործարան, որք միաբանութեամբ շինեալ յաւարտս հասուցին, զթուղթ հանին, և դաշակերաս ուսուցին և դարձան... (որպէս տալցաւ այս յապրելի 16), որոց թէ տարե-

կան վարձ՝ և թէ քեարխանի շինութեան և իւրեանց խարճ ընդամենս եղև ԱճԺ (110) թուման։ Տես զտաճկաց միամտութիւնն և զնոցին չարամտութիւնն, որք միշտ ծաղր առնէին նոցա. իսկ նոքա զիւրեանց յարաջացոյցին որքան կարէին և Թոանկքն այսպէս նենգնութիւնս արարին» (նույն տեղ էջ 586—587)։

Բացի այս, նաև մի շարք վկայութիւններ կան թղթագործարանի ծախսերի մատյանում²⁾, որոնցից մեկի միջ բերումը ավելորդ չենք համարում «ի սոյն ամի (1775 թ.), ի մարտի 22-էն, մինչև զդեկտեմբերի 11. թէ Թոանկաց և թէ տաճկաց թղթատանն վերա այս ինչ խարճ զնաց, որ ահա ի ներքոյ գրի կարգաւ»։ Եւ այնուհետև թվարկվում են ծախսերը։

Պարզ է, որ էջմիածնում միաժամանակ հիմնարկվել է թղթի ոչ թե մեկ, այլ երկու դործարան, մեկը Ֆրանսիացի և մյուսը պարսիկ վարպետների ձեռքով. սրանցից մեծը, որ հավանաբար Ֆրանսիացի վարպետներն էին կառուցել 20 զազ երկարութիւն և 9 զազ լայնութիւն ունեւ և կառուցված եր Զաքիկենց Գրիգոր աղայի ծախքով. պարսիկ վարպետների կառուցած արհեստանոցի տարածութիւն մասին տեղեկութիւններ չկան։

Պատվավոր կերպով ավարտելով իրենց գործը՝ 1776 թվի ապրիլի 16-ին մեկնում են պարսիկ վարպետները։ Նույն թվի հոկ-

¹⁾ Այս մատյանը սեփականութիւնն է ՀՍՍԻ Ժողովրդավարական Լից Պետական Զեռագրատան. (Արխիվի բաժին, Կաթող. դիվան, Թղթապահակ 7, № 3) կաշեպատ է, փափուկ կաղձով. 21,3 × 25,5 սմ. մեծութեամբ, բաղկացած է 104 թերթից։ 2—12 թերթերի վրա գրված է թղթագործարանների 1775—1781թթ. ծախսերը, կից 7 օրատառիկ։ 23ա—26ա, 32ա—32բ և 36ա—46բ էջերում ժամանակավոր օգտագործման համար միաբաններին և վարձատան տաններին հանձնված, այլ և այլ անձանց նվեր ուղարկված և վաճառված զրքերի ցուցակները (1781—1789թթ.), կից 4 պատառիկ և մեկ ցուցակ կաղձատան գործիքների։ 1ա, էջում էջմիածնի միաբաններին և այլոց արված ստանձանների ցուցակը (1816—1817 թ.)։ Կից ցուցակ՝ Թոխաթի նվիրակ Սիմեոն կաթողիկոսից կաթողիկոսին նվիրված իրերի։

42ա—46բ՝ 1816—1818 թվականների այլ և այլ եկեղեցիների ու վանքերի ուղարկված եկեղեցական անոթներ և զրկանների ցուցակը՝ կից 2 պատառիկ։ Մնացած էջերը մաքուր են։

²⁾ Դիվանում սխալմամբ նույններին։

տեմբերի 28-ին աշխատանքից հեռացվում է Ֆրանսիացի փոքր թղթաշենը և աղա նոյններին՝ մեծը:

Այնուհետև գործարանի ղեկավարութունը անցնում է առաջին հայ թղթագործ վարպետ Նիկողայոսին, որը սովորել էր պարսիկ թղթագործների մոտ և հարպիրեն յուրացրել Ֆրանսիացի վարպետների հմտությունը: Սրա մասին 1777 թ. ծախսերի մատյանում արձանագրված է «յապրիլի 21. օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնիւթ թղթոյն բաշխիչ հառւ երկու հազար դրան»: Մյուս աշակերտի՝ Մարգարի մասին հետապնդում գրանցումներ չկան:

3. ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Թղթաշենության երկու գործարանի կառուցման և կահավորման վրա ծախսված է մոտ 18000 դուռուշ՝ չհաշված վարպետների, բանվորների և աշխատանքի վրա կատարված ծախսերը: Այս դուռուշը հսկայական մի գումար է, եթե նկատի ունենանք իր ժամանակի արժեքը: Ավելորդ չենք համարում՝ համեմատության համար բերել նույն թղթագործարանի ելքի մատյանի հետևյալ գրանցումները «Գոմեշ մի առի որում հառւ 15 հազար դրան. (= 22 դուռուշ 20 փարա)»¹⁾, կամ Գալիթ վարպետի և թարջիման Սափանն գծիանքն իւրանց գողանալ հառւն ի յԱլիքուշակ գեօղն, որոց երկուն պարզ լինի. գինն է 90 դուռուշ», և կամ «Աշխի Գալուստին մէկ բոլոր տարվա տօնլուդն հառւ ի լրանալ տարւոյն... 24 դուռուշ»:

Թղթաշենության գործարանի կառուցման և գործիքավորման համար աշխատել են. —

ա) Քարհատներ 1235 մարդ օր, օրական՝ 20-25 փարա յով.

բ) Թառառներ 279 մարդ օր, օրական՝ 12-15 փարա յով.

գ) Դարբիններին արված է 1232 դուռուշ, օրավարձը՝ 25 փարա յով.

դ) Մշակներ 4217 մարդ օր, օրական՝ 6 փարա յով.

ե) Որմնագիր բանվորներ («բանահ») 318 մարդ օր, օրական՝ սապել են 15 փարա, և այլն:

4. ԹՂԹԱԴՈՐՄԱՐԱՆՈՒՄ ՕԴՏԱԴՈՐՄԱՆ ԴՈՐՄԻՔՆԵՐ

Թղթագործարանի ծախսերի մատյանից երևում է, որ նրա գործիքները օգտորոտսովել են փայտից, քարից և զանազան մետաղներից:

ՓԱՅՏՅԱՆ ԴՈՐՄԻՔՆԵՐ. — Ամենից առաջ արժանի է ուշադրության փայտյա «մանկեանան» կամ մամլիչը. այս մամլիչը նման է եղել մինչև վերջին ժամանակներս Հայաստանի ձիթհանքերում օգտագործվող սեղմիչներին. նրա բաղկացուցիչ մասերն են ա) 12-15 մետր երկարությամբ հասալի բաններ, որոնց թիվը կարող է լինել երկու կամ չորս բ) «արջ», գ) «պողոսիկ» (բուքդու), դ) «կախքար»:

Մանկյանան կամ մամլիչը կառուցված է հետևյալ ձևով. — գերանների մի ծայրը գեանից քառորդ մետր բարձրության վրա, տեղավորվում է պատի մեջ հատուկ պատրաստված անցքում, որը վերին կողմից բևեռված է մինչև 50 տոնն ծանրության քարերով: գերանների մյուս ծայրին ամրացվում է (վերին կողմից) «արջ» կոչվող կոճղը, որը մեջտեղում ունի մոտ երեք դեցիմետր արամագծով անցք առ և ակոսներով: այս անցքի մեջ տեղավորվում է նույն տրամագծի, դարձյալ առ և ակոսներով «պողոսիկը» (մոտ 5—6 մետր երկարությամբ գերան). պողոսիկի ներքին ծայրում ամրացված է մինչև մեկ տոնն ծանրության «կախքարը». որը ձևով նման է աղացի քարին:

Մանկյանան գործի զցելու համար պողոսիկը կախքարի հետ միասին պտտեցվում է ձախ և «արջի» օժանդակությամբ գերանները բարձրացնում են վերև. գերանների տակ՝ նրանց հիմքին մոտիկ, տեղավորվում է մամլիչը նյութը և ապա պողոսիկն աջ պտտեցնելով, գերանները լիջեցվում են մինչև այն աստիճան, որ նրանք հենվեն մամլիչի նյութին. այնուհետև պողոսիկը կախքարի հետ միասին բարձրանում և կախվում է օղի մեջ և իր ամբողջ

¹⁾ Ծանոթ. 40 փարան հախառը է մեկ դուռուշին:

ծանրությամբ գերաններին ներքև ձգելով՝ մախում է նրանց տակ տեղավորված նյութը:

Գերանները բարձրացնելիս, որպեսզի պտտվող պողոսին իր ներքին ծայրով գետին չխրվի, նրա տակ, գետնի մեջ տեղավորված լայն, հարթ քարի վրա դրվում է վերևից զոգավոր չուգունի օկավառակ: Սկավառակի փոսիկի մեջ տեղավորվում է պողոսիկի ներքին ծայրը, երբ վերջինս հասնում է նրան:

Այս տիպի սեղմիչի օգտագործման փաստը հաստատվում է մատյանում կառարված հետևյալ գրանցումով. «Պառատ Գրիգորին 12 աւուր վարձն հառ 12 ապասի (=3 զուռուշ 24 փարա) որ մեկ արջ՝ և մեկ պողոսիկ փորեաց»:

Ենթադրում ենք, որ այս մանկյանան օգտագործված է թուղթ մամլելու համար:

Թղթի բաղադրությունը ծեծելու և մանրացնելու համար պատրաստվել են փայտյա սանդեր. այդ մասին կա հետևյալ գրանցումը. «Բամբակաձորն ի ներքոյ սանտացու փայտին վախճանեալ Աշտարակցի Այվազի տղայի փեսային ողորմութիւն հառ Երեք թումանի»:

Քարից պատրաստվել են ավազաններ և նավեր, որոնցով հեղուկ թղթանյութը հոսել է մի տեղից մյուսը. թղթանյութը մանրելու համար պատրաստվել է նաև հատուկ ջրաղաց:

Պղնձից պատրաստել են դանազան մեծ ու փոքր ամաններ, ծորակներ, խառնիչներ և այլն:

Երկաթի օգտագործման մասին մատյանում կա միայն մեկ գրանցում. «Բամբակաձորոյ դարբնոցն վասն հինգ երկաթեայ տախտակաշինութեան տուեալ էին Երեք թուման» (հավանաբար այս տախտակները օգտագործել են թղթի մամլելու ժամանակ): Սակայն մի քանի գրանցումներից պարզվում է, որ այլ և այլ վայրերից ահագին քանակությամբ երկաթ է գնված կամ այլ և այլ վայրերից հրավիրված երկաթագործներին մեծ գումարներ են վճարել. թե ի՞նչ գործիքներ են պատրաստել այդ վարպետները, չկա և ոչ մի նշում: Ահա այդ

գրանցումները. «Սամախոռ երկաթ առի ի Դարսայ 109 թիլանի¹⁾ (=785 կ. գ.) և մեկ հոխայ²⁾. գինն հառ 285 զուռուշ 37 փարա. ի բամբակաձորոյ 200 լիտրն³⁾, մեկ լիտրն Երեք ապասիով, գին հառ 12 թուման». կամ «Յոյն դարբնին չորս ամսէն վարձն հառ Եօթն թուման երկու հազար (դիան). իւր աշակերտ Պողոսին երկու թուման. իւր աշակերտ Խուզավերտուն մեկ թուման երեք հազար (դիան) և Բերօին մեկ թուման... մեր գիւղացի դարբնացն 42 աւուր վարձն հառ վեց հազար (դիան) երեք ապասի և այլն»:

Լավ թուղթ ստանալու համար վճռական նշանակություն են ունեցել մաղերը՝ որպիսիք պատրաստել են պարբերաբար, յուրաքանչյուր անգամ 2-8 մաղ:

Մի շարք մանր գործիքներ, գլխավորապես այլ և այլ չափումների համար դնվել են Ֆրանսիացի վարպետից, այդ մասին կա հետևյալ գրանցումը. «Թղթաշեն Մուսիօ Բեյսօնէն մանր գործիս առաք չափուց այսինքն՝ փարկեալ, կանգուն և զայլ նմանիս որոց գին հառ քսան և հինգ զուռուշ»:

Հետաքրքիր է նույն մատյանի հետևյալ գրանցումը. «Զարին յորժամ գլուխ բերին և պտտեցաւ ջրով յուլիսի 2-ին. օրն շաբաթ, բաշխիչ հառ գործավարացն»: Այս գրանցումից պարզվում է, որ թղթի արտադրության պրոցեսում օգտագործված է ջրի շաբօիչ ուժը:

5. ՀՈՒՄՈՒՅԹ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹՆԵՐ

Թղթաշինության համար որպես հիմնական հումույթ օգտագործվել են մի քանի տեսակ նյութեր: Մրանցից առաջնակարգ տեղ է գրավել քաթանի փայասը: Քաթանի ձևաք բերման համար Սիմեոն կաթողիկոսը գիմել է ոչ միայն Բայազետ, Կարս կարին, այլ նաև Ասորական՝ Ռուսաստանի նվիրակ Հովսեփ Արղության վարդապետին, որպեսզի սա Ռուսաստանի այլ և այլ

¹⁾ Ծանրության չափ է, մոտ 7,2 կ. գ.

²⁾ Ծանրության չափ է, մոտ 1,2 կ. գ.

³⁾ Ծանրության չափ է, մոտ 1,8 կ. գ.

քաղաքներում վալաա հավաքել տա և ուղարկել էջմիածին:

Քաթանի հավաքման գործի մասին Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում կարդում ենք.—

«Գրեաց (Հովսեփ վարդապետին) և գորպեսութիւնս թղթատանն և երեք թապաղա յղեաց ի տնտանել: Եւ վասն հին քեթանի գրեաց զպատուէր՝ զի թէ հնար է, և կարէ, զհին քեթան տացէ ժողովել և աստ յղել (1776 թվի հոկտ. 27-ի նամակից, էջ 512):

«Եւ պատուէր (Կարսեցի պարոն Գեորգին)՝ զի վասն թղթաշինութեան նիւթոյն հին քեթան ևս հողացեալ յղեացէ» (1775 թ. մայիսի 22-ի նամակից, էջ 403): «Եւ վասն յղեալ հին քեթանին մեղադրութիւն գրեաց սմա (Կարինի առաջնորդ Հարություն վարդապետին) զի սորա առեալ հասալովն թղթի մեկ դաստայն երկու դուռուշից աւելի նստեր ի մեր վերայ... Թուղթ ևս մեղադրութեան առ ս. Աթուռոյս գործակալ տեր Մանուէլն (Կարին) գրեաց, զի յառաջագոյն գրեաց սմա և առաջնորդին, եթէ անպիտ քեթան գտանիցի որոց հօխայն երկու և երեք փարայով տացէն, առեք. իսկ նորա հիսուն երեք փարայով էին առեալ հօխայն... նոցա տուեալ զինն հասալ արարաք, որ թող զխարճն և զշաֆայն ի մեկ հօխայն երեք դաստա թուղթ ելաներ և դաստան կես դուռուշ նստեր (1775 թ. հուլիսին. նույն տեղ էջ 464):

Թղթատան ծախսերի մատյանում արձանագրված է Վալաա քսան թիւանի՝ ի Բայազիդու յղեաց թերդի Կիւրեղն քիւրայն կտու երեք դուռուշ. իսկ 27 թիւանի ի յերգրումու յղաց, քիւրայն կտու չորս դուռուշ: Վերջին երկու գրանցումները հետաքրքիր են նաև թղթի մոտավոր արժեքը և փոխադրությունների վարձաչափը պարզելու տեսակետից:

Բացի քաթանից գործածվել է նաև բամբակ, կանեփ և կտավհատի ցողուն, այս նյութերի վերաբերյալ թղթագործարանի ծախսերի մատյանում կան հետևյալ գրանցումները.

«Նոր աշակերտ Նիկողայոսին և Մարգարին բաշխիշ կտու չորս հաղար դիան,

որ նոր բամբակէ թուղթ խրանց ձեռօքն հանեալ բերին ընծայ սրբազանին»: «Կանաչ կտաւահատ առաք ի յԱլիքոչակ, վասն թուղթ շինելոյ. զին կտու հաղար դիան»: Կամ «կտաւահատի ցողոն հանող հիսուն և չորս մշակացն վարձ կտու հիսուն և չորս շահի»: «Կանեփ առի 36 լիտր, որոց զինն 36 դուռուշ, կանեփի հունտ 17 լիտր, զինն 10 դուռուշ... ի Բայազիդու մինչև ցատա, թե սոցա և թէ Գալուստ վարդապետի կանեփին քիւրա կտու տասն և հինգ հաղար դիան»:

Որպես օժանդակ նյութ օգտագործվել է՝ ա) կալաքար, բ) թորթոն կամ բրոք, գ) բորակ, մշակվող նյութերի մաքրման, սպիտակացման և մածուցիկ դարձնելու համար, դ) գետկառ կամ ողնձարջասպ, ե) շիւղ, զ) սոսինձ, է) նշաշտայ:

Վերահիշյալ բոլոր նյութերը, բացի սոսինձից ներմուծվել են Տանկաստանից: Իսկ սոսինձը պատրաստելու մասին ծախսերի մատյանում կան հետևյալ գրանցումներ. «Թութխալ եփել կտուք ձեռամբ ձորագիւղացի ուստա Աղիբեգին և իւր եղբայր Պետրոսին ի տասն կաշուց արջառաց, որք ութն օր աշխատեցան. իւր վարձ կտու 15 դուռուշ, որ չորացաւ կշռեցաք եղև կօթն հօխա և կէս». կամ «թութխալ եփել կտու ի պատառոտեալ կաշուց ութն հօխա, վարձն կտու 2 դուռուշ 31 փարա»:

6. ԳՈՐԾԱՐԱՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԹՂԹԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՌԵԱԼԻԶԱՑԻԱՆ

Գործարանի արտադրական կարողության մասին ուղղակի վկայություններ չբերան. այդ իսկ պատճառով, որոշակի ասել, թե այսինչ ժամանակում, այսինքն մի օրում, շաբաթում, կամ ամսում որքան թուղթ է արտադրվել, չենք կարող. հայտնի չէ նաև արտադրական պրոցեսի տևողությունը: Մակայն ծախսերի մատյանում գտնվող գրանցումներից հնարավոր է վերահիշյալ հարցերի մասին մոտավոր գաղափար կազմել. ահա այդ գրանցումները. «Ի յօգոստոսի 18. կտու 25 թիւանի փալաս և՛ հինգ թիւանի կանեփ, չորս հօխա թութխալ, երկու հօխա կէս շիւղ և

հիսուն դրամ¹⁾ կէօկտաշ, որ եղև երեսուն և մէկ թիւանի 200 դրամ (=224 կ. գր.). իստցանէ դուրս եկն 16 թիւանի չորս հոխայ 350 դրամ (=120 կ. գր.) թուղթ, որ էր 13 օղմայ պիտանի և 15 դաստայ վտիտ, գործավորացն քաշխիշ կտու. ի դեկտեմբերի 20, օրն հինգշաբթի՝ Վասպուրի 21 (1777 թ.) օրն ուրբաթ, նոր վարպետ Նիկողայոսն սկսաւ ծեծել զնիւթ թղթոյն, քաշխիշ կտու որ նոր թուղթն հանէին ի յուլիսի 15. 3 դուրուշ՝ Այս քաղվածքից ելնելով, արտադրութեան պրոցեսի տեղութեան և գործարանի արտադրական կարողութեան մասին եզրակացութեաններ հանելը դուր մասնագիտական հարց է, ուստի այն հանձնում ենք մասնագետների ուշադրութեանը. նկատենք սակայն, որ քաշխիշ տալու ժամանակը կարող էր հետ մնալ թղթի արտադրութեան պրոցեսի ավարտումից:

Արտադրված թուղթը օգտագործվել է գլխավորապես տեղական կարիքների համար. դուրս մասամբ բախարսել է այլ վանքերի և թեմական առաջնորդների կարիքները. ինչ վերաբերվում է արտահանմանը դեպի հարեւան երկրներ՝ այդ մասին ճշտով տեղեկութեաններ չկան: Սակայն կամեկ փաստ, որը ենթադրել է տալիս, թե արտահանման հնարավորութեան այնուամենայնիվ եղել է, 1776 թ. նոյեմբերի 6-ին Գրիգոր Չաքիկյանցին գրած նամակում Սիմեոն կաթողիկոսը հայտնում է, թե նրա կողմից ուղարկված մուրհակների հինգ տեսակ բլանկներից չորսական օրինակ ուղարկում է՝ և եթե պահանջ կա թող հայտնի, որ շատ տպեն և ուղարկեն՝ Մադրասում ծախելու համար. ենթադրում ենք, որ այդ բլանկները տպվելու էին Էջմիածնի թղթի վրա. այսպես ինչ շահ այդ գործից: Բացի այս՝ թղթի առանձին օրինակներ ուղարկված են Վրաց Հերակլ արքային, Կ. Պոլսի և Ռուսաստանի հայոց հոգևոր առաջնորդներին և այլոց: Տեղում թուղթը մեծ մասամբ գործադրվել է տպարանում. Էջմիածնի թղթի վրա տպվել են մի շարք աշխատութեաններ, որոնցից հայտնի է Սի-

մեոն կաթողիկոսի «Պարտավճար» աշխատութեանը, որից Պետական Ձեռագրատանը (Մատենադարանում) կա հինգ օրինակ (հին տպագրեր № 102):

Արտադրվող թուղթն օգտագործվել է նաև գրադրութեանների համար. այժմ Պետական ձեռագրատան (Մատենադարանի) արխիվում պահվում են քաղվածքի վավերագրեր, գրված նույն թղթի վրա:

Որակի տեսակետից թուղթը քավական կոչու, դուրսով բաց-հարդապէս, գորշ կամ ոչ շատ սպիտակ. թուղթը ունի ջրանկար դրոշմ, որը իրենից ներկայացնում է մեկ կողմում «Սուրբ Էջմիածին» բառերի փակագիրը, սրից ներքև «Ս. Կ. Սիմեոն կաթողիկոս բառերի սկզբնատառերը, մյուս էջում՝ դարձյալ փակագրով «Թուրն ՌՄԻՇ» (1776) և Գրիգոր Միքայելյանի (Թոշաջանյան, Չաքիկյան) անվան և ազգանվան սկզբնատառերը՝ «Գ. Մ. Չ. Ինչպես վերը նշեցինք այս Չաքիկյանի ծախսով է կառուցվել և տպարանը և թղթի գործարանը, որի անունը հավերժացնելու համար Սիմեոն կաթողիկոսը ոչ միայն արձանագրութեաններ փորագրեց տպարանի և թղթագործարանի հակատներին, այլ նաև նրա անունը հիշատակել է ինչպես արտադրվող թղթի վրա, այնպես էլ տպագրվող գրքերի առաջին էջերում:

Սիմեոն երևանցու կողմից կառուցված թղթի գործարանը ըստ երևույթին շատ կարճ կյանք ունեցավ. (ընդամենը 5—6 տարի): Նրա մահվանից հետո գործարանը զաղարկեց գործելուց (գործարանի ծախսերի մատչանում 1781 թվից հետո գրանցումներ այլևս չկան, իսկ դա ապացույց է գործարանի խափանման): 18-րդ դարի վերջին և 19-ի սկզբի քաղաքական անցուղարձերի՝ աղա Մամատ խանի արշավանքների և այնուհետև Ռուս-Պարսկական պատերազմի հետևանքով գործարանն ընդմիշտ ավերվեց և ավարի տրվեցին նրա մետաղյա գործիքները:

* * *

Դուրս սրանով մեր հոգվածն ավարտեինք, եթե մեր առջև չծառանար անխուսափելի մի հարց. այդ այն է, թե նախքան Սիմեոն երևանցու կողմից կառուցված գոր-

¹⁾ Ծանրութեան չափ է. մոտ 3 դրամ:

ծարանը և նրանից հետո՝ Հայաստանում աշխարհին գոյութիւն ունեցել է, թէ ոչ:

Անկախ այն բանից, որ մեր ձեռքի տակ դեռ ևս փաստեր չկան, պիտի ենթադրել, որ անցյալում նույնպէս, թղթի մը շակման արհեստանոցներ գոյութիւն ունեցել են: Թղթի վրա գրված Հայկական հին ձեռագրերի այն հսկայական քանակութիւնը, որն ունենք այժմ, խոսում է հոգու այս ենթադրութեան:

Թղթի վրա եղած ձեռագրերից ամենահինը որ գտնվում է Մատենադարանում, դա 10-րդ դարի (971) մի պատմական ժամանակագրական ժողովածու է, գրված 358 թերթի վրա, միջին մկերտյան գրչութեամբ Պետական ձեռագրատան (Մատենադարանի) ձեռագիր № 2679 (102): Թուղթը՝ ինչպէս նաև ձեռագրերի մեծ մասի թղթերը, չունեն իրենց վրա ոչ մի դրոշմ, որից կարելի լինէր պարզել թէ որտեղ է այն արտադրվել:

Ինչ վերաբերում է հետազոյին (այսինքն՝ Սիմեոնի կառուցած գործարանից հետո ընկած ժամանակին), կարող ենք ասել, որ Հայաստանում այլևս թղթի գործարան չի հիմնվել Սաղաթ արվել է մի փոքր՝ աշխարհին հիմնադրելու: Այդ փորձը, որ կատարվել է Սահակ ծաղկարար եպիսկոպոսի կողմից՝ իր տեսակի մեջ մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում. ահա մի քանի տեղեկութիւններ այդ մասին:

1837 թ. ծաղկարար Սահակ եպիսկոպոսը խնդրագրեր է ուղղում Էջմիածնի սինոդին, նոր թղթագործարան, նկարչական ներկերի, կաղմարարական ու այլ անհրաժեշտ նյութերի (պատաշ, նիշաշտա, ժանգառ, լաջվարդ, դրմզի և այլն) արհեստանոց կազմակերպելու համար, (տես ՀՍՍՏ ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատան արխիվային քաժին, Սինոդի անտեսական մասի 1837 թ. նո 9 գործը): Սահակի առաջին խնդրագրի առթիվ Սինոդը իր նույն թվի մարտի 1-ի հիմնում որոշում է. «հրամանագրել Սահակայ եպիսկոպոսի, զի նա առ այժմ թողեալ զմեքենայն իւր (թղթաշինութեան) յայտնեցէ Սիւնհոդոսին, թէ առաջին անգամ որքան դրամը հարկաւ-

րին նմայ՝ առ ի յառաջ ամէլ գերիս խոտացեալ ի նմանէ նիւթս պատաշի, նաշիշտի և ժանգառի. և այնքան դրամով որքան կարող է պատրաստել դայնպիսիս, զի Սիւնհոդոսս կարացէ յիւրում ժամանակի տրնորինել քստ այսմ մասին զարժանն» (Նույն տեղ. թերթ 2):

Այսպիսով թղթագործարանի կառուցման խնդիրը մերժվում է:

Երկրորդ և երրորդ խնդրագրերի քնննութիւնից հետո, որ տեղի է ունենում սինոդի 1837 հուլիսի 16-ի նիստում, որոշվում է լուսարար Բարսեղ եպիսկոպոսին հանձնարարել անհրաժեշտ նյութերը և համապատասխան քանակութեամբ գրամը տրամադրել ծաղկարարին և ապա նրան հանձնարարել Ալեքսանդրացի Զաքարիային, որը Սահակին տանելու է պղնձաճանճը՝ նկարչական ներկերի արտադրութեան համար անհրաժեշտ հանքը որոնելու:

Ութն ամիս անցնելուց հետո, 1838 թ. մարտի 11-ին, Սինոդը նույն խնդրի մասին որոշում է. քանի որ մինչ այդ Սահակ եպիսկոպոսը և լուսարար Բարսեղը գործի հետագա ընթացքի մասին տեղեկութիւններ չեն տվել «որք ցուցի իսպառ ոչ մատուցեն Սիւնհոդոսին ի պատճառս անկատար թողելոյ Սահակայ եպիսկոպոսին զայն առաջարկութիւն իւր, ըստ ինչ-ինչ անակնունքի զիսուածոյ, զգործն՝ որ ի Սիւնհոդոսին առ ի մասինս այսմիկ, աւարտեալ համարել յիւրում ժամանակի տալ ի դիւանն փասն պահպանութեան» (Նույն տեղ թերթ 18):

Հետագա մի օրագրից (1838 թ. ապրիլի 22) պարզվում է, որ ներկեր պատրաստելու համար Սինոդի պահանջմամբ պղնձաքար է ուղարկվել Ելիսավետապոլից՝ Հարութիւն վարդապետի կողմից և հանձնվել է Սահակ եպիսկոպոսին, որն օգտագործելով այն, պատրաստի նյութը հանձնել է տպարանի վերատեսչին:

Ստանալով ծաղկարարի վերջին հայտարարութիւնը՝ Սինոդը քաղաքացիական է միայն նրանով, որ ծախսված գումարի դիմաց որոշ արդյունք ստացվել է և չի մըտահոգվել գործը հետագայում առաջ տանելու և զարգացնելու համար:

**

Մահակ ծաղկաբարի ծաղկած կոնդակներին բազմաթիվ օրինակներ մինչև այժմ էլ պահպանվում են Մատենադարանի արխիվում, որոնց վառ գույները կարող են շարժել ամեն մի նկարչի նախանձը:

Ավելորդ չենք համարում, հավելվածի կարգով ստորև գետեղել ծաղկաբարի խրնդրագրերն ու հայտարարությունը, ուղղված Սինոդին, որոնք պահվում են Սինոդի Տնտեսական մասի 1837 թ. վերսիշյալ № 9 գործում, թերթ՝ 1, 5, 10, 11, 22:

Այդ խնդրագրերը ցույց են տալիս դեպի թղթի գործարանը և ձեռնարկությունները էջմիածնի գեկավարության կողմից ունեցած անտարբերությունը, և ծաղկադարդ Իսահակ երևանցու կողմից գործադրվող ջանքերի անպատասխան մնալը:

Հրապարակվող փաստաթղթերը հետաքրքիր են նաև այն տեսակետից, զոր մասնանշում են թղթի պատրաստման համար 19-րդ դարու առաջին կեսում գործադրվող նյութերի, ինչպես նաև երևանին մոտ գտնվող պղնձի մազանների և այլ քարահանքերի մասին:

I

Արքայան սխնհոդոսի լուսավորչեան աթոռոյ Կաթողիկէ էջմիածնի, ի ծաղկադարդ Իսահակ եպիսկոպոսէ Մահաեսի տէր Գրիգորեան երևանցոյ:

Խ Ե Ղ Ի Բ

...Ո՛վ սրբազան Հարք. ձեզ քաջ յայտնի են աշխատանք իմ, և զանազան ծառայութիւնք, որ ի մանկութենէս սրբոյ Աթոռոյս և առուրց յաւուրս յաւելորդութիւնք իմոյս պատշաճեալ գործոց շնորհիւն աստուծոյ: Ըստ իմս կարեաց, որպէս գյօրիւնէն զնորանշան թուղթս, զպատաշ ասացեալ սպիտակ ազն՝ փասն լուսացման գրեանց տղարանի, զնշտայն՝ պիտանացուն կազմարարի, զսոսինձն՝ փասն կցանի կոնդակաց, զգալամի ծանգառն՝ փասն ծաղկաբարութեան, նմանապէս զղրմզն և զաջիվար-

ղն. և շնորհիվ սուրբ հոգոյն Աստուծոյ տակաւին զոն յիս աշլ և գաղտնի պիտանացու գիտելիք արհեստին իմոյ և օգտաւէտ ոմանց, զորս չեմ եղեալ յայտնի ի գործ. իհարկէ, պարագայք սորին գրամով բերին ի ձեռս. զի ինքեանք են ծանրագին յոյժ և նիւթք իւրեանց դիւրագին:

Ապաքէն եթէ նորին բարձր սրբազնասուրբ օծութիւն և ձերդ սրբազնութիւն բարենաճեցին առ աշտոսիկ հրամայեցէ՞ք իմում նուաստութեան, յաղագս նորոգ յօրինելոյ դիւրին ձեով զգործարանս թղթածանութեան. զի պլան այսր գործարանի ունիմ պատրաստի ի ձեռս. քանզի դաւելորդ հատեալսն ի մամլոյ՝ որք իւր անպիտան արտաքս ընկենուն կազմարարք, կամ փակեթք բարեազրաց և կամ անպիտան բարեազիրք և տուժարք, որ յոմանց ի հուր արկանեն, յոմանց արտաքնոցն թափին և յոմանց տուեալ լինին վաճառանոցրն, ալդ շնորհիւն Աստուծոյ կարող եմ զայնոսիկ միանգամայն սխտոյադուցանել և յարգել, շինելով զնոսա սխտանի թուղթըս և մուխավայս (խաւաքարտ, կարդոն), փասն զանազան գրեանց տղարանի: Ահա ծաներո՛ւք և տեսէ՛ք. սակայն յայտնեցի եզրակացութիւն խնդրոյս ձերում բարձր սրբազնութեան. զի եթէ բարենաճեցիք ի հարկէ ծախսն սոցա պարտի ի գանձարանէ սրբոյ Աթոռոյս լինել:

Այլև խնդրեմ այնպէս ստորագրեալ հրամայեցիք իմումս նուաստութեան, որ ոչ հիւսն կամ վարպետք և կամ միաբանք զանազան խօսակցութեամբ ասիցեն թէ՛ մեք քան զնա լաւագոյնս կարող եմք յօրինել. ապա թէ ոչ յայնժամ թուխսրտեալ փոխանակ հետեւելոյ յետս նահանջիմ և լինիմ այպն կատականաց և նշաւակ բազմաց ըստ տեղունեան առածին թէ՛ այլս այս կամեցաւ աշտարակ շինել և այն. քանզի որպէս օդուտ գործարանիս փառք են և պարծանք սրբոյ Աթոռոյս և ձերդ սրբազնութեան, ի հարկէ և նմանապէս և ամօթանք: Ահա ընտրեցեք գրարին յամոնս բարիս, զխոտանն ի բաց ընկեցեք. ծաներո՛ւք և տեսէ՛ք և վայելին ձեր աստու-

ծով զօգուտ գործառնութեանս, յուսած յԱստուած զուարճասցիք մեծով շնորհակալութեամբ և բերկրեցիք անպատում խնդութեամբ ի հոգի և ի մարմին ընդ քրիստոսապսակ պառական գլխով մերով, որում ընդ ձեօք տացէ տէր Աստուած կեանս և խաղաղականս յաջողութեամբ և բարեբախտութեամբ ի ցնծութիւն մեր և ի պարծանս Հայկազեան սեռիս:

Մնամ վասն ընդհանրական կառավարութեան Ձերոյ ըստ ամենայնի հնազանդ ծաղկարար Իսահակ նուսատ եպիսկոպոս Մահալսի տէր Գրիգորեան Երևանցի:

Մ 8

1837 փետրվարի 12
ի Սենեակն իմ

II

Սրբազան Սիւննոգոսի գերագահ Մայր Աթոռոյ կաթողիկէ Էջմիածնի. ի ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոսէ Մահալսի տէր Գրիգորեան Երևանցւոյ:

Ամենախոնարհ խնդիր:

1837 ներկայ թուոջս ի 12 փետրվարի 8 համարու խնդրամատոյց եղէ դրաւորութեամբ սրբազան Սիւննոգոսից վասն հրամայելոյ իմում նուսատութեան յօրինել նոր ինորոյ զգործարանս թղթահանութեան դիւրին ձեով. ըստ որում պլան սոյն գործարանիս ունիմ պատրաստի ի ձեռս, նըմանապէս զպատաշ ասացեալ սպիտակ աղն զնշտայն և զայլ հաշկաւօր պիտանացութիւն, ի նուսատութենէս յօրինելու. որպէս օգտաւետութիւնք սոցա ցուցանէն ի նախկին գրութիւնէս, զի նիւթք սոցա են դիւրագին, բայց ինքեանք ծանրագին:

Քանզի՜ մինչև ցայսօր կամ անբավական ի խնդրագրոյս և սպասու Ձերում հրամանի, ահա ժամանակն է արդէն գնելոյ ի դործ և սկսելոյ զպլան սոյն զգործարանիս. կամ միւս դեղորայքն՝ որ առաւել ևս են հարկաւորք (ժաներուք և տեսք.) որոց ժամանակն յօրինելոյ, այս 3 ամիսն է, որոց մինն էանց. եթէ 2 ամիսն ևս անցանի, որ ջերմային աւուրքն են, սոքա այլ ոչ ևս յառաջ դան և տարին բոլոր՝ զուր անցանի, ի վերա մեր. թէ պատաշն թէ նշտայն, սոնպէս միւս դեղորայքն են:

Վասնորոյ խնդրեմ խոնարհարար եթէ կամք Ձեր բարեհաճին մերում խնդրոյ՝ չյամեցուցանել ևս յայս նուագ իբրև դառաջինն պատասխան սոյն գրոյս:

Այլ և խնդրեմ խոնարհարար զՁեռն Վասն կապուտակ և կանաչագույն քարանցն լաջիվարդի, որ ասի բաղաշիւի, որ գտանն սոքա ի պղնձահանքին Երևանայ. թէ և այժմ ոչ բանի մատենն նորայ, սակայն գիտեմ հաւատաւաւ, որոց շուհարն կուտակեալ կան ի հին ժամանակէ մերձ առ մատենն պղնձահանքի, որոյ օգուտն տեսեալ եմք՝ ևս ծառայ Ձեր, յաւուրս յուսանողի Հայրապետին Եփրեմայ բազմաւ աշխատութեամբ իմով՝ շահեցի սրբազան Տեառն իմոյ և շահեցա ի նորին սուրբ օծութենէն. վասն որոյ՝ ասեմ մին լաւ բնագէտ կտրիչ թուանկչի, հանդերձ ամենայն պարագաիւք, և քանի մի թուման վասն ծախուց նորին, առք ինձ և առ աղա Մատթէոսն Մէլիք Արաճամեանն Մէլիք Աղամալեանց, գրեցէք որ ինքն ևս՝ իւր սպասաւօրքն դա ընդ իս ի մատենն իւրեանց՝ յաղագս ցույց տալոյ զտեղիս մատենին—գնամ որոնէմ ի մեջ կուտակացն այնք ջնէրին պղնձոյ—Տեսէք յայնժամ ողորմութեամբն Աստուծոյ թէ քանի՞ օգտաւետ բանս բերալ ընծայեմ Ձերում սրբութեանն, օգուտ և պարծանք Սրբոյ Աթոռոյս և մեզ և այլն:

Ծաներուք և տեսեք.

Հաւատացէք Աստուած կենդանին, քանի որ տեսանում եմ զկոտորակոն թղթոց ցիր և ցան թափեալ առա և անդ, այնպէս եմ համարում թէ իմ շորերն են հանեալ թափեալ առա և անդ. հրամայեցէք ինձ ևս ըստ նմանութեան պարոն Յովսէփ Տուլայտլին, որ նա իւր մտացածին բանքն՝ օգուտ տէրութեան և Ձեր ևս ցուցանէ, և վասն այնր՝ ընկալնու նա բազում շնորհակալութիւն հանդերձ պարգեօք:

Եթէ մինն ոչ կորուսանեմք վասն տասին, տասն ի միասին որ գտանեմք. 1817 ամին մինչ լաւն յօրինեցի լաջիվարդ, գրեցի այս բանն ի վերա նորա. Զառն դատրի՜ զարկեալ բիւլը. որ նորին սուրբ օծութիւնն ուրախացեալ ի վերա այսր բանին, շնորհեաց ինձ ոսկեայ տուփ մի մինալու և 5 եւլաուզ ոսկի, վասն որոյ՝ ետու պղնձա-

հանքի վերակացու Ղազար անուն ունեմն, ծառայի հանգուցեալ Մէլիք Սահակի, մին թուաման, մին չախու՝ և մին ծաղկեաց փեշկիր, որ մինչ կտու նմա նշան այնք քարին երկր զանազան տեսակ քարինս ի պղնձոյ մատանիցն, և ես բազում տքնութեամբ ի գլուխ հասուցի լաւն, որոյ գրամն հինգ ոխալով, 10 դրամ կտու թեքիրտաղու Առաքել եպիսկոպոսին, որ 100 դրամ խնդրեաց յինէն, 10 կտու վասն ոչ պակասելոյ մերն. և շատ փոշման եմ, որ ոչ կտու նմա հարկերի կէսն ինչ և իցէ՝ վասն բազումն գտանելոյ կորուսի այն ժամանակին դմինն, որ գտի բազումն. դեռ ես՝ կորուսածում եմ վասն զանազան բանիցն նաքս գտանելոյ, և յուսամ թէ գտանէմ. որպէս վասն Արմզին, թէ մը չափ եմ կորուսեալ, ինձ է յայանի և գտի վասն բազմաց զմեծագին մատանին, որ վայելեալ օրհնեմ գտուողն ամենայն բարութեանց և զանգին կեանս նոցին, որ կամեցան զիս վարձատրել. եթէ օգնէք ինձ այժմ, և Ձեզ ես օրհնեմ ընդ տուօղին բարութեանցն ամենից: Եմ և մնամ վասն ընդհանրական կառավարութեան Ձերոյ ըստ ամենայնի հազանդ ծառայ Ձեր և սրբոյ Գահոյս՝

Ծաղկազարդ Իսահակ եպիսկոպոս Մանսուր անը Գրիգորեան Երեւանցի

Համար 60:

1837 յունիսի 23

ի Սբ. Էջմիածին:

Վասն թղթահանութեան, նոր տեսակ չարի մի թեթեւ ձեռով թէ կամիք, շնորհեցեք հրաման ըստ նմանութեան Նահրայի կամ նման չղրիսի շինել տամ և բանեցնող նորին պատրաստի ունիմ քեալաշ Յակօն, որ ձեռամբ պատելով բանի պինկն: Ըստ պատմութեան աղա Յակօր Շահան Զրպետեանին որ ասաց ցիս, մինչ էի ի քաղաքի անդ ի Տփլիս՝ թէ Փարէժ քաղաքումն ոչ գոյ մուրացիկ բնաւ. ամենայն ոք թէ կոյր, թէ կաղ թէ անդամալոյժ և այլ այնպիսիք են ընդ իշխանութեամբ և գործին իւրաքանչիւրն զանազան գործս վարձով, թէ այլ և թէ կին, որոյ տպեալ գրքէն ունիմ օրինակեալ այժմ պատրաստի վասն տեսութեան հարկաւոր անձանց յաղազս դործ դնելոյ մերս աշխարհի կոյրքն, կաղքն և այլքն վասն փա-

ռաց տեսան պարծանք աշխարհի և տերութեան, և վասն ոչ տալոյ ձանձրութիւն ժողովրդոցն, որ դռնէ ի դուռ մուրացկան լինելով, ամաչեն ինքեանք և ամաչեցուցանեն նոցա որ ոչ կամին տալ ողորմութիւն. և նոքա արանջալով շրջեն աստ և անդ. եթէ այնպիսեացն այսպէս ծառայութեան մէջ կացուցանել լինի, մեծ ողորթիւն է համարելոյ, որ ոչ շրջեն և ոչ տիրասէրքն ֆրաս տան այնպիսեացն. Այսքանս Ձերդ սրբազանութեան բաւեցի վասն օղտի և պարծանացն սրբոյ Գահոյս:

Խ.Ծ.Ծ. Իս. Ե

3

Սրբազան Սիւննոգոսի լուսավորչեան Աթոռոյ սրբոյ կաթուղիէ Էջմիածնի. ի Ծաղկազարդ Իսահակայ եպիսկոպոսէ Մանսուրի Տէր Գրիգորեան Երեւանցոյ

Ամենախոնարհ խնդիր,

Յաղազս բազմահրաշ օգտաւետութեանցն ասեմ, զոր խնդրամատոյց եղէ երկիցս անդամ.— Առեք հինգը լիտր Ղալաւաշի վասն պատաշին. կամ երեք լիտր լաւն, որ հանաչէ Բօյաղչին:

Հինգ լիտր լաւ սպիտակահատ ցորեան ջրովի և ոչ դէմի. վասն նշշտային: Երեք կտոր կարմիր պղինձ, վասն դալամի ժանկաւին, որ ամէն մին կտորն մի ձեռաց չափ լայնութիւն ունենայ, նոյն չափովն երկայնութիւն լիցի. թանձրութիւնն՝ մուխաւայի նման լինի. և վասն սորա երեք չարեք թունդ քացախ. և մին լայնաբերան բղուղ վասն քացախին. թէ լայնաբերան շիշայ լիւնէր երեք հատ առաւել ևս լաւ էր. յաղազս յօրինելոյ զժանկաւն:

Մէկ խաւիլ ձկան սոսինձ սպիտակն, որ ասէն պալիս թութխալի. վասն կոնդակաց կցանին:

Սոցա որն աստ գտանի տուք ինձ, և որն ոչ գտանի, Երեւանու բերիլ տուէք:

Յաղազս կապոյտ և կանաչ քարանցն ասեմ, որ ելանէ ի հանքս պղնձոյ՝ որոց օգուան դեր ի վերոյ է թէ սրբոյ Աթոռոյս և թէ՛ վասն բազմաց, որոց փորձս գիտեմ շնորհիւն աստուծոյ լաւացուցանելոյ և պիտոցուցանելոյ:

Վասն այս քարանց՝ հանձնեցէք զիս
պարոն Զաքարին, որ բնակի ի յԱլիքուչակ-
նա գիտելով զտեղիսն հանքաց, խոստանա
տանել զիս անդ՝ յաղագս օրոնելոյ, որ ըստ
պատմութեանս գովէ նա գտեղիս կուտակալ
ջուհարիցն պղնձոյ գոյն զգոյն քարանցն
որք են անդ:

Վասն այսր տուք ինձ ի գանձարանէն
երեք թուման մանր փող դնամ որոնեմ.
Ըստ յաջողելոյն աստուծոյ որքան կարողա-
նամ ձեռք բերեմ, թէ մնացէ դրամն՝ տամ
Ձեզ. թէ պակասի տուք ինձ. և ի գնալս
հրամայեցէք տալ ինձ հանգարտ երբևար
մի լավ երիշով և պաշար ևս՝ թէ կամիք.
ապա թէ ոչ այն եղիցի ի կամս Ձեր. գի-
տելով Ձեր այս քանս վասն օգտի և պար-
ծանաց սրբոյ զահւոյս և արժանընտիր զա-
հակալի Մայրութեան սորին և Ձեր, ողջ
լերուք հանապազօր վասն մեր:

Մնամ յամենայն սրտէ շանադիր ծառայ
սրբոյ գահուոյ խոնարհ ծաղկազարդ եպիս-
կոպոս Իսահակ Մանտեօ Տէր Գրիգորեան
Նրեանցի:

Zusatz 85.

1837. 10. 14.

probably hereby of the

4

Ի լուսավորչական Հայոյ Սիւնհոդոսն
Էջմածնի ի ծաղկապարզ Իսահակ եպիսկո-
պոսէ:

Знаменити ђеци:

Ըստ հրամանի անդամոյն Սիւնհոգոսի
բարձր սրբազան աւագ լուսարարի Աթոռոյս
Բարսղի արքեպիսկոպոսի յաղագս շինելոյ
զպատաշ և նիշեստէի զոր և արարեալ մեկ
հանձնեցաք վերատեսչի տպարանի Աթոռոյս
մասնաւոր Յովհաննէս վարդապետի որք են
երկու լիտր պատաշ և չորս իստիլ ինն մըս-
խալ, նիշեստէն երեք լիտր և կես չալբէք,
և զծախան ալոցիկ ընկալեալ եմ ի վերոյ
շիշեալ բարձր սրբազնութենէ՝ անդամոյդ ի
Բարսղէ արքեպիսկոպոսէ, հինգ լիտր քա-
լալքար, իւրաքանչիւր լիտրն երեք արա-
սով առնէ երեք հազար դիան վեց մշակ՝ իւ-
րաքանչիւրն տասն շահիով նոյնպէս առնէ
հազար դիան և չորս կաղ տոսլրակացու կը-
տաւ, կազն մի մի ապասով, ութն հարիւր
դիան, զորս ստացեալ եմ ի բարձր սրբա-
զնութենէն վերոյ յիշեալ, և ահա ընդ ամին
ներկայացուցանեմ զթուղթ ստացական վե-
րատեսչին տպարանի մասնաւոր Յովհաննէս
վարդապետին առ որ խնդրեմ տնօրինութիւն
Սիւնհոգոսիդ:

Ի 16 օգոստոսի 1839:

Սուրբ Էջմիածնի ծաղկադարձ Բաճակ եպիսկոպոս